

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Շահութահարկի մասին» 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-47 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Սույն օրենքի իմաստով՝

1) դեբիտորական պարտք է համարվում հարկ վճարողին այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարը, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողին վճարման (վերադարձման) ենթակա պարտքի գումարների.

2) կրեդիտորական պարտք է համարվում հարկ վճարողի կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի (այդ թվում՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով) գումարը, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողի կողմից վճարման ենթակա պարտքի գումարների:»:

**Հոդված 2.** Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «մաշվածքի ենթակա» բառերից հետո լրացնել «, սեփականության իրավունքով շահութահարկ վճարողին պատկանող կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) ստացված» բառերը,

2) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներմուծվող կամ ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է շահութահարկ վճարողի հայեցողությամբ, բայց ոչ պակաս, քան մեկ տարի:»:

**Հոդված 3.** Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ժզ» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժէ» կետ.

«ժէ/ սեփականության իրավունքով շահութահարկ վճարողին պատկանող, սակայն ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրված հիմնական միջոցների մասով սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը:»:

**Հոդված 4.** Օրենքի 18-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ 100 000 ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:»:

**Հոդված 5.** Օրենքի 32-րդ, 38-րդ և 67-րդ հոդվածներում «20» թվերը փոխարինել «18» թվերով:

**Հոդված 6.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շահութահարկի առաջիկա կանխավճարի վճարման համար սահմանված ժամկետում կատարվում է շահութահարկի 18 տոկոս դրույքաչափով հարկվող գործունեություն իրականացնող ռեզիդենտ հարկ վճարողների հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված շահութահարկի կանխավճարների վերահաշվարկ՝ հաշվի առնելով Օրենքի 45.1-ին հոդվածի 2-րդ մասը:

**Հողված 7.** 2020 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների համար Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շահութահարկի 10 տոկոս դրույքաչափով հարկվող գործունեություն իրականացնող ռեզիդենտները Օրենքի 45.1-ին հոդվածով սահմանված շահութահարկի կանխավճարներ չեն կատարում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**